ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«12» նոյեմբեր 2020թ. No 3989 - Լ

ԿԱՏԱՂՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՄԱՐԴՈՒ ՄՈՆՈԿԼՈՆԱԼ ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ, «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՄՈՒՆԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԵՍՏԻՆ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՎԱԾ ՈՒ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՎԱԾ ԿԱՏԱՂՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՄԱՐԴՈՒ ՄՈՆՈԿԼՈՆԱԼ ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿԵՐՆ՝ ԸՍՏ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ԸՍՏ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել.

1) «Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների կիրառման հրահանգը»՝ համաձայն հավելված 1-ի:

2) «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի տարածքում տեղակայված բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների ազգային պահեստին ի պահ հանձնված ու պահեստավորված կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների բաշխման ցանկն՝ ըստ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մարզային մասնաճյուղերի՝ համաձայն հավելված 2-ի:

3) «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի տարածքում տեղակայված բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների ազգային պահեստին ի պահ հանձնված ու պահեստավորված կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների բաշխման ցանկն ըստ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների՝ համաձայն հավելված 3-ի:

2. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի պաշտոնակատար Արտավազդ Վանյանին, գլխավոր տնօրենի տեղակալ, իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավար Գայանե Սահակյանին՝ սահմանված կարգով ապահովել.

1) «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի տարածքում տեղակայված բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների ազգային պահեստին ի պահ հանձնված ու պահեստավորված կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների բաշխումը «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մարզային մասնաճյուղերին՝ համաձայն հավելված 2-ի:

2) «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առեվտրային կազմակերպության «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի տարածքում տեղակայված բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների ազգային պահեստին ի պահ հանձնված ու պահեստավորված կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների բաշխումը բժշկական

օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին՝ համաձայն հավելվածի 3-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ հրամանը տեղադրել առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված 1
Առողջապահության նախարարի
2020 թվականի նոյեմբերի 12-ի N 3989 - Լ հրամանի

ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

ԿԱՏԱՂՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՄԱՐԴՈՒ ՄՈՆՈԿԼՈՆԱԼ ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ

(Ազդեցությունից (կծելուց) հետո կատաղության կանխարգելման համար)

1. **Նկարագրություն՝**

Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինները կատաղության վիրուսի մակերեսային G գլիկոպրոտեինի նկատմամբ մանրէազերծ մարդկային IgG1 մոնոկլոնալ հակամարմիններ են՝ նախատեսված վերքերի ինֆիլտրացման և միջմկանային ներարկման համար: Կիրառվում է կատաղության դեմ պատվաստանյութի հետ կոմբինացված՝ պատվաստաման ներարկման վայրից հեռու հատվածում: Այն ստանդարտացվել է հակակատաղության իմունոգլոբուլինի միջազգային էտալոնային ստանդարտի համաձայն: Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմիններն արտադրվել են ռեկոմբինանտ ԴՆԹ-ի տեխնոլոգիայով՝ CHO-K1 բջիջների կիրառմամբ, մաքրման եղանակով: Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների կապվելը կատաղության վիրուսի մակերեսային G գլիկոպրոտեինի հետ կանխում է վիրուսի կապումը թիրախ-բջիջներին:

2. **Բաղադրությունը՝**

Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմիններ (ռԴՆԹ)	50ՄՄ/1.25մլ	100ՄՄ/2.5մլ	250ՄՄ/2.5մլ
Յուրաքանչյուր մլ-ը պարունակում է կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմիններ	40ՄՄ	40ՄՄ	100ՄՄ

Օժանդակ նյութեր՝ ցիտրատային բուֆեր (նատրիումի ցիտրատ և կիտրոնաթթու), պոլիսորբատ 80, նատրիումի քլորիդ:

3. **Կիրառումը՝** Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինները կիրառվում են որպես պասիվ բաղադրիչ ազդեցությունից (կծելուց) հետո կատաղության

կանխարգելման համար կատաղության դեմ պատվաստանյութի հետ կոմբինացված/միաժամանակ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկներին համապատասխան:

Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների կիրառումը կախված է կատաղությամբ կասկածելի կենդանու կողմի ազդեցության /կոնտակտի/ բնույթից:

Կատեգորիա	Կոնտակտի բնույթը	Բուժում
I	Հպում կենդանուն և վերջինիս կերակրում, չվնասված մաշկի թքոտում	Չի պահանջվում
II	Մաշկի բաց հատվածների կծած վերքեր, քերծվածքներ՝ առանց արյունահոսության	Անհապաղ՝ կատաղության դեմ պատվաստում
III	Միակի/բազմակի տրանսդերմալ կծած վերքեր/քերծվածքներ, լորձաթաղանթների թքոտում, վնասված մաշկի թքոտում, չղջիկների կողմից կծած դեպքեր	Անհապաղ՝ կոմբինացված բուժում կատաղության դեմ պատվաստանյութով և հակակատաղության իմունոգլոբուլինով (կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմիններով)

Բոլոր կատեգորիաների կոնտակտի դեպքում առաջարկվում է անմիջապես վնասվածքը, քերծվածքները լվանալ մեծ քանակությամբ ջրով և օճառով: Ըստ անհրաժեշտության պետք է կատարել նաև փայտացման կանխարգելում:

Բուժումը պետք է սկսել կենդանու հետ կոնտակտից հետո հնարավորինս շուտ, սակայն երբեք չպետք է մերժել հիվանդին՝ անկախ ժամանակահատվածից:

Միաժամանակ, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն առաջարկում է հակակատաղության իմունոգլոբուլինի և կատաղության պատվաստանյութի կոմբինացված կիրառում II կատեգորիայի ՄԻԱՎ/ՁԻԱՀ պացիենտների դեպքում:

4. **Հակացուցում՝** Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների կիրառման հակացուցումներ չկան, քանի որ կատաղությունը մահացու հիվանդություն է:

Պրեպարատի բաղադրիչների նկատմամբ պացիենտի գերզգայնության դեպքում կիրառում են նախազգուշական միջոցառումներ:

5. **Նախազգուշացում՝** Անաֆիլքասիայի կամ ծանր ալերգաբանական ռեակցիայի զարգացման դեպքում անհրաժեշտ է կիրառել համապատասխան դեղորայք և ըստ անհրաժեշտության՝ սիմպտոմատիկ բուժում:

6. **Նախազգուշական միջոցառումներ.**

1) Վերքերի ինֆիլտրացիայի դեպքում որոշ անատոմիական կառուցվածքների պարագայում /մատի ծայր/ անհրաժեշտ է ցուցաբերել զգուշություն՝ հյուսվածքների ճնշումից խուսափելու համար /ճնշման համախտանիշ/:
2) Գնահատել պրեպարատի բաղադրիչների նկատմամբ ալերգիկ ռեակցիաների առաջացման հավանականությունը: Պրեպարատը ներարկել անաֆիլաքսիայի և ծանր ալերգաբանական ռեակցիաների դեպքում առաջին օգնության դեղորայքով ապահովված վայրերում՝ ադրենալինի հիդրոքլորիդ 1:1000 և այլ անհրաժեշտ դեղորայք:
3) Հատուկ ուշադրություն դարձնել, որ պրեպարատը արյունատար անոթում չներարկվի:
4) Յուրաքանչյուր պացիենտին ներարկումը կատարել նոր ներարկիչով և ասեղով:
5) Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինները չի կարելի ներարկել ներերակային:
6) Ներարկվում է միջմկանային:
7) Մակարդելիության խնդիրներ ունեցող պացիենտների մոտ կարող է դիտվել ներարկման տեղի հեմոռագիկ բարդություններ:
8) Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների դեղաչափը ոչ մի իրավիճակում չպետք է բարձրացնել, քանի որ բարձր դեղաչափը կարող է ճնշել հակամարմինների արտադրումը:

7. **Փոխազդեցությունը այլ դեղերի հետ՝** Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների փոխազդեցությունը այլ դեղերի հետ չի ուսումնասիրվել: Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների կրկնակի դեղաչափերը կատաղության դեմ պատվաստումից հետո արգելվում է, քանի որ կարող է ճնշել հակամարմինների արտադրումը:

8. **Հղիություն՝** Հղիությունը կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների կիրառման համար հակացուցում չէ, քանի որ կատաղությունը մահացու հիվանդություն է: Հայտնի չէ կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինները կարող են ազդել պտղի վրա, կամ կնոջ վերարտադրողական ֆունկցիայի վրա, թե՝ ոչ:

9. **Կողմնակի երևույթներ՝** Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների կիրառման կլինիկական հետազոտությունների արդյունքում դիտվել են տեղային ռեակցիաներ՝ ցավ, կարմրություն, այտուց, քոր, ընդհանուր ռեակցիաներ՝ գլխացավ, սրտխառնոց, թուլություն, դող, մկանացավ, արթրալգիա, որոնք ժամանակավոր են և անցնում են առանց բարդությունների: Այդ երևույթների հաճախականությունը և ծանրության աստիճանը համադրելի է հակակատաղության մարդկային իմունոգլոբուլինից և կատաղության դեմ պատվաստոնյութից հետո դիտվող երևույթներին հաճախականությանը և ծանրության աստիճանին:

10. **Կիրառումը և դեղաչափը՝** Օգտագործելուց առաջ ստուգել սրվակի ամբողջականությունը և պիտակավորումը: Սրվակի ամբողջականության, պիտակավորման խախտման, ինչպես նաև ֆիզիկական հատկությունների փոփոխման դեպքում այն օգտագործման ենթակա չէ: Ազդեցությունից /կծելուց/ հետո կանխարգելումը ներառում է մեկ դեղաչափ կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների ներարկում և կատաղության դեմ պատվաստման ամբողջական կուրս: Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինները և կատաղության դեմ պատվաստանյութի առաջին դեղաչափը կատարվում է հնարավորինս շուտ: Կատաղության դեմ պատվաստանյութի հաջորդ դեղաչափերը կատարվում են համաձայն պատվաստանյութի կիրառման հրահանգի: Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների առաջարկվող դեղաչափը 3.33ՄՄ/կգ է՝ ըստ մարմնի զանգվածի: Նախընտրելի է կատարել կատաղության դեմ պատվաստման առաջին դեղաչափի հետ: Սակայն կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինները կարելի է ներարկել նաև կատաղության դեմ պատվաստման առաջին դեղաչափից հետո 7 օրվա ընթացքում: Եթե անատոմիորեն հնարավոր է, ապա կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների ամբողջ դեղաչափը

պետք է ինֆիլտրացնել վերքի շրջակայքում և վերքի մեջ: Մնացած ծավալը պետք է ներարկել միջմկանային՝ պատվաստման հատվածից հեռու:

Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների 3.33ՄՄ/կգ դեղաչափը նախատեսված է և երեխաների, և մեծահասակների համար: Բազմակի վնասվածքների դեպքում կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինները կարող են նոսրացվել 0.9% ֆիզիոլոգիական լուծույթով՝ բոլոր վերքերի շուրջ ինֆիլտրացիայի համար անհրաժեշտ ծավալ ապահովելու նպատակով:

Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինները չի կարելի ներարկել պատվաստման նույն ներարկիչով կամ կատաղության դեմ պատվաստման տեղում: ՉԻ ԿԱՐԵԼԻ ՆԵՐԱՐԿԵԼ ՆԵՐԵՐԱԿԱՅԻՆ:

Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինների դեղաչափը չի կարելի բարձրացնել կամ կրկնակի ներարկել , քանի որ բարձր դեղաչափը կարող է ճնշել հակամարմինների արտադրումը:

11. **Պահպանման և տեղափոխման պայմանները՝** Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինները պահպանվում են +2-ից - +8°C ջերմաստիճանում: **ՉՍԱՌԵՑՆԵԼ:** Սառեցված պրեպարատը կիռարման ենթակա չէ: Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինները կոնսերվանտներ չեն պարունակում, հետևաբար բացված սրվակի մնացած չօգտագործված քանակները ենթակա են խոտանման: Ժամկետանց պրեպարատը կիռարման ենթակա չէ:

12. **Թողարկման ձևը՝** Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմինները թողարկվում են հետևյալ ձևով՝

50ՄՄ/1.25մլ (40ՄՄ/մլ) 22հկ,

100ՄՄ/2.5մլ (40ՄՄ/մլ) 22հկ,

250ՄՄ/2.5մլ (100ՄՄ/մլ) 22հկ:

Հավելված 2
Առողջապահության նախարարի
2020թվականի նոյեմբերի 12–ի N 3989 – Լ հրամանի

ՑԱՆԿ

«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՄՈՒՆԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԵՍՏԻՆ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՎԱԾ ՈՒ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՎԱԾ ԿԱՏԱՂՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՄԱՐԴՈՒ ՄՈՆՈԿԼՈՆԱԼ ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ՝ ԸՍՏ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ

Հ/Հ	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ	Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմիններ, շշիկ /հատ/
1.	«Արագածոտն» մասնաճյուղ	50
2.	«Արարատ» մասնաճյուղ	50
3.	«Արմավիր» մասնաճյուղ	50
4.	«Լոռի» մասնաճյուղ	60
5.	«Կոտայք» մասնաճյուղ	50
6.	«Շիրակ» մասնաճյուղ	60
7.	«Սյունիք» մասնաճյուղ	50
8.	«Վայոց Ձոր» մասնաճյուղ	40
9.	«Տավուշ» մասնաճյուղ	60
10.	«Գեղարքունիք» մասնաճյուղ	60
	ԸՆԴԱՄԵՆԸ	**530**

Հավելված 3
Առողջապահության նախարարի
2020 թվականի նոյեմբերի 12-ի N 3989 - L հրամանի

ՑԱՆԿ

«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՄՈՒՆԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԵՍՏԻՆ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՎԱԾ ՈՒ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՎԱԾ ԿԱՏԱՂՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՄԱՐԴՈՒ ՄՈՆՈԿԼՈՆԱԼ ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ՝ ԸՍՏ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության անվանում	Կատաղության վիրուսի դեմ մարդու մոնոկլոնալ հակամարմիններ, շշիկ /հատ/
1.	«Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն	9
2.	«Արաբկիր» բժշկական համալիր - երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ	9
3.	«Էրեբունի» բժշկական կենտրոն	9
4.	ԵՊԲՀ «Մուրացան» հիվանդանոցային համալիր	9
5.	«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն	9
6.	ԵՊԲՀ «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր	9
7.	«Քանաքեռ Զեյթուն» բժշկական կենտրոն	6
8.	«Աստղիկ» բժշկական կենտրոն	6
	ԸՆԴԱՄԵՆԸ	**66**